# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտարարում է բաց մրցույթ՝ **«ԼՂՀ մշակույթի և երիտասարդության պալատ»** պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

«ԼՂՀ մշակույթի և երիտասարդության պալատ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի մրցույթին կարող են մասնակցել Արցախի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք ունեն`

ա)բարձրագույն կրթություն,
բ)տնօրենի պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն /այդ թվում՝ ՀՀ Սահմանադրություն, աշխատանքային օրենսգիրք, պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ԼՂՀ օրենքը, մշակույթի ոլորտի Արցախի Հանրապետության օրենսդրություն և այլ իրավական ակտեր/:

Հավակնորդները պետք է ունենան կազմակերպության զարգացման տեսլական:

ԼՂՀ մշակույթի և երիտասարդության պալատի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը`
ա)գրավոր դիմում ՀՀ ԿԳՄՍ նախարարի անունով,
բ)3x4 չափսի երկու լուսանկար,
գ)աշխատանքային գրքույկի պատճեն,
դ)ինքնակենսագրություն,
ե)բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն,
զ)տեղեկանք մշտական բնակության վայրից,
ը)բնութագիր վերջին աշխատավայրից /եթե կազմակերպությունը չի լուծարվել/,
թ)զինվորական գրքույկ կամ զինապարտության մասին փաստաթուղթ:

Մրցույթին մասնակցելու համար դիմումները /փաստաթղթերը բնօրինակներով/ ներկայացնել 2023 թվականի սեպտեմբերի 4-7-ը, ժամը՝ 10:00-ից 12:00-ը նախարարության աշխատակազմի կադրերի բաժին:
Հասցե`Թումանյան 48, հեռ.՝ (047) 96 19 35

Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի սեպտեմբերի 11-ին, ժամը 10:00-ին` ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում: